ՎԱՐԴԱՆ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ
ԵՊՀ ֆինանսահաշվային ամբիոնի պրոֆեսոր,
տնտեսագիտության դոկտոր

ԱՐՄԻՆԵ ՋԱԽԱՐՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող,
տնտեսագիտության թեկնածու

ԻՆՈՎԱՑԻՈՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հոդվածը նվիրված է Հայաստանի Հանրապետությունում ինովացիոն և ներդրումային գործունեության ակտիվացման մեթոդների և մեխանիզմների, դրանց արդյունավետ կիրառումը պայմանավորող գործոնների, ինովացիոն և ներդրումային նախագծերի ֆինանսավորման հավանական աղբյուրների, ինչպես նաև ինովացիոն և ներդրումային ակտիվության խթանման արտասահմանյան առաջատար փորձի ուսումնասիրությանը:

Հայաստանում ձևավորված տնտեսական հարաբերությունների ներկա համակարգի խոցելի կողմերը, հանրապետության բարդ աշխարհաքաղաքական դիրքը, տարածաշրջանային զարգացումներից մեկուսացված լինելու և մրցակցային առավելությունները լավագույնս չօգտագործելու հանգամանքները, տնտեսական համագործակցության արդյունավետ մեխանիզմների բացակայությունը, կառավարման կառուցակարգերի անկատարությունը, ինչպես նաև Արցախի հիմնախնդիրը հրամայաբար պահանջում են երկրի տնտեսական ռազմավարության մշակում և դրա հետևողական իրականացում: Հայաստանի Հանրապետության համար տնտեսական զարգացման ռազմավարության կարևորագույն ուղղություն պետք է դառնա բարձր տեխնոլոգիաների ոլորտի առաջանցիկ զարգացումը, ինչը ենթադրում է ինովացիոն գործունեության խթանում, կառավարման արդիական կառուցակարգերի արմատավորում, ներդրումային գրավչության բարձրացում, արտահանմանն ուղղված արտադրությունների կազմակերպում և այլն: Դրա համար Հայաստանն ունի բոլոր հնարավորությունները,

որոնք ձևավորվել են դեռևս կենտրոնացված կառավարման տարիներին: Հայաստանը ժողովրդատնտեսական մեծ համալիրում առաջատար դիրքեր էր գրավում տիեզերական հետազոտությունների, հաշվողական տեխնիկայի, ռադիոէլեկտրոնիկայի, նավիգացիոն սարքավորումների, կիսահաղորդիչների և բարձր տեխնոլոգիաների արտադրության այլ ոլորտներում:

Շուկայական հարաբերությունների զարգացման անցած ժամանակահատվածում հանրապետությունում սկսեցին ձևավորվել արտադրության կազմակերպահրավական նոր ձևեր, որոնց շարքում, կորպորատիվ կառավարման, արտադրության ժամանակակից ուղղությունների կազմակերպման, ինովացիոն գործունեության և տնտեսական ակտիվ համագործակցության առումով, անշուշտ, առանձնանում են բաժնետիրական ընկերությունները: Հոդվածում << բարձր տեխնոլոգիաների ոլորտի բաժնետիրական ընկերությունների օրինակով քննարկվել են դրանց ինովացիոն և ներդրումային գործունեության ակտիվացման որոշակի մեխանիզմներ:

Հիմնաբառեր. *տնտեսություն, ներդրումներ, ինովացիոն գործունեություն, խթանում, ֆինանսավորում, պետական քաղաքականություն, զարգացում, արդյունավետություն*

JEL: G02, G32, O31

Գրականության ակնարկ: Մրցակցային միտումների ուժգնացման պայմաններում տնտեսության արդիականացումը և դրա զարգացման ուղղությամբ կայուն աճի ապահովումը պահանջում են նպատակամետ և ուղղորդված ինովացիոն գործունեություն, որի հետ կապված հարցերը մշտապես գտնվել են գիտագործնական ուսումնասիրությունների առանցքում:

Ինովացիոն գործունեության տեսամեթոդաբանական հիմքերը և այդ գործընթացի մակրոտնտեսական կարգավորման առանձնահատկություններն առավել ամբողջականորեն ներկայացված են *Ե.Վ. Բոգատովայի* ուսումնասիրություններում[1]: Աշխատանքում հիմնավորված են ինովացիաների կառավարման գործընթացում ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման անհրաժեշտությունը, արժեթղթերի շուկայի զարգացման և փոքր ու միջին ձեռներեցության ոլորտում նորարարական գործունեության ակտիվացման կարևորությունը: Այստեղ առաջարկված են ինովացիոն գործունեության խթանման և գնահատման մեթոդական մոտեցումներ:

Ռուսաստանի Դաշնության տնտեսությունում ինովացիոն գործունեության ակտիվացման և դրա մրցունակության բարձրացման հարցերը համակողմանիորեն ուսումնասիրված են *Ռ.Ա. Ֆատխուտդինովի* հետազոտություններում[2]: Նրա կարծիքով՝ ինովացիոն գործունեության ակտիվացման արդյունավետ գործիք կարող է դառնալ աշխատանքում առաջարկված «Մեթոդիկա ⇒ Տնտեսություն + Տեխնիկա + Կառավարում ⇒ Մրցունակություն» (ՄՏՏԿՄ) համակարգը, որը տնտեսության, տեխնիկայի և կառավարման ինտեգրմամբ մեծապես կնպաստի տնտեսավարող սուբյեկտների մրցունակության բարձրացմանը: Աշխատանքում հատուկ ուշադրություն է հատկացված

---

[1] Տե՛ս **Богатова Е.В.,** Инновационная экономика: монография, М., Издательство “Русайнс”, 2014, 88 с. ISBN 978-5-4365-0168-0:

[2] Տե՛ս **Фатхутдинов Р.А.,** Инновационный менеджмент. Учебник для вузов. 6-е изд., СПб.: Питер, 2011, 448 с. ISBN 978-5-469-01658-8:

ինովացիոն մենեջմենթի գիտական հիմքերին, որոնք ներառում են անհրաժեշտ իրավական ակտերը, առաջարկվող մոտեցումները և ինովացիոն տնտեսության գործիքները: Հեղինակը մշակել է նաև ՌԴ գիտատեխնիկական և ինովացիոն ներուժի պահպանման ու զարգացման ռազմավարական մոտեցումներ:

Տարբեր մակարդակներում ինովացիոն գործընթացների կառավարման առանձնահատկությունները ներկայացված են *Լ.Պ. Գոնչարենկոյի* ուսումնասիրություններում[3] : Այստեղ բացահայտված են ինովացիոն գործունեության ակտիվացմանը նպաստող և խոչընդոտող հիմնական գործոնները, անդրադարձ է կատարված ինովացիոն գործունեության պետական կարգավորման և ինովացիոն կառավարման գործիքակազմի ձևավորման հիմնահարցերին, ինչպես նաև առաջարկված են ինովացիոն ձեռներեցության պաշտպանության մեխանիզմներ:

Ինովացիաների ներդրման գործընթացում հանդիպող հիմնական մարտահրավերների, ինչպես նաև դրանց դիմակայելու արդյունավետ միջոցներին առնչվող խնդիրների լուծումը դիտարկված է *Վ. Գովինդարաջանի* և *Ք. Թրիմբլեի* աշխատություններում[4] : Հեղինակները նկարագրում են ինովացիոն նախագծերի իրագործման համար անհրաժեշտ անձնակազմի հավաքագրման և կառավարման առանձնահատկությունները, տվյալ գործընթացին բնորոշ ռիսկերի արդյունավետ կառավարման կառուցակարգերը և այլն: Այստեղ Allstate, BMW, Timberland և Nucor ընկերությունների փորձի հիման վրա առաջարկված են ինովացիաների ներդրման արդյունավետ մոտեցումներ:

Նորարարական գործունեության ռազմավարությունների մշակման և այդպիսի գործունեության կառավարման ժամանակ, որպես կանոն, հանդիպում են տարբեր անորոշություններ: Նման պայմաններում ինովացիաների ներդրման, ինովացիոն նախագծերի ֆինանսավորման, ինչպես նաև մարդկային ռեսուրսների օգտագործման առանձնահատկությունները ներկայացված են *Ա. Աֆուահի* աշխատություններում[5]: Հիմնվելով սեփական փորձի վրա՝ հեղինակը բացահայտում է ինովացիաների ներդրման գործընթացի կառավարման և ֆինանսավորման գործառույթների միջև առկա սերտ կապը: Աշխատանքում մշակվել է նաև կայուն եկամտի ստացման ռազմավարություն, որը ենթադրում է կառավարման, մարքեթինգի և ֆինանսների գործառույթների համակարգում:

Համաշխարհային տնտեսության զարգացման ներկայիս միտումների համակողմանի վերլուծության հիման վրա *Լ.Ս. Չիժովան* առաջարկում է ինովացիոն բնույթի զբաղվածության համապարփակ հայեցակարգի մշակման գործնական ուղիներ[6]: Հեղինակը հիմնավորում է, որ Ռուսաստանի Դաշնության համար տնտեսության զարգացման հումքային մոդելի իրատեսական այլընտրանք է ինովացիոն զարգացման ուղին, որը ենթադրում է մարդկային

---

[3] Տե՛ս **Гончаренко Л.П.,** Инновационный менеджмент. Учебник для вузов. 2-е изд., издательство Российского экономического университета имени Г.В. Плеханова, М., 2018, 487 с. ISBN 978-5-9916-7709-7:

[4] Տե՛ս **Govindarajan V., Trimble C.,** The Other Side of Innovation: Solving the Execution Challenge. Harvard Business Review, 2010, 226 p. ISBN 978-1-4221-6696-3:

[5] Տե՛ս **Afuah A.,** Innovation Management: Strategies, Implementation, and Profits. Oxford University Press; 2-nd edition, 2002, 400 p. ISBN 978-0195142303:

[6] Տե՛ս **Чижова Л.С.,** Инновационная экономика: занятость, трудовая мотивация, эффективность труда: монография. М., Экономика, 2011, 432 с. ISBN 978-5-282-03144-7:

կապիտալի արդյունավետության բարձրացում և գիտելիքի ռացիոնալ օգտագործմամբ ինովացիոն առաջընթացի ապահովում:

Ինովացիոն զարգացումներում ներդրումների արդյունավետության բարձրացման մեթոդները հիմնականում ներկայացված են *Ու.Ֆ. Շարպի, Գ.Դ. Ալեքսանդերի, Դ.Վ. Բեյլիի* հետազոտություններում[7]: Այստեղ հիմնավորված է ներդրումային ռիսկերի կառավարման անհրաժեշտությունը, մշակված են անորոշության պայմաններում ֆինանսական գործիքների արդյունավետ ընտրության մեխանիզմներ և այլն: Աշխատանքում հեղինակները ներկայացրել են տարբեր երկրների արժեթղթերի շուկաների գործունեության առանձնահատկությունները, ինչպես նաև առաջարկել են միջազգային ներդրումների եկամտաբերության բարձրացման մոտեցումներ:

Ակնհայտ է, որ Հայաստանի Հանրապետության տնտեսության ներկայիս վիճակը պահանջում է տնտեսության ինովացիոն զարգացման խթանման արդյունավետ ուղիների բացահայտում և նպատակամետ գործունեություն, ինչով էլ պայմանավորված է սույն հետազոտության արդիականությունը:

Ներածություն: Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման ներկայիս փուլում ինովացիոն և ներդրումային գործունեության ակտիվացումը տնտեսության արագընթաց զարգացման ապահովման կարևորագույն նախապայման է, ինչպես նաև նոր աշխատատեղերի ստեղծման, բնակչության կենսամակարդակի բարելավման և գնողունակ պահանջարկի խթանման գործուն միջոց: Այն մեծապես պայմանավորված է արդյունավետ պետական կառավարմամբ և ինովացիաների իրացման, ներդրումների ներգրավման, տնտեսական գործընթացներում գիտության և տեխնիկայի նվաճումների ներդրման համար անհրաժեշտ պայմանների ստեղծմամբ շահագրգռված կառույցների ինտեգրմամբ:

Տնտեսավարման ներկա պայմաններին բնորոշ տնտեսական միջավայրի ակտիվությունը, արտաքին միջավայրի մշտական փոփոխությունը, արտադրանքի մրցակցային գների և արժույթների փոխարժեքների տատանումը, ֆինանսական միջոցների գնաճային արժեզրկումը, մրցակցային պայքարի ուժեղացումն ու մի շարք այլ անբարենպաստ զարգացումները պահանջում են ինովացիոն և ներդրումային քաղաքականությունների առավել զգոն իրականացում: Ընկերությունների մեծամասնությունը շուկայական մրցունակության պահպանման նպատակով ստիպված է մշտապես արդիականացնել արտադրական հզորություններն ու առկա նյութատեխնիկական բազան, ինչպես նաև ընդլայնել գործունեության նոր տեսակներն ու դրանց ծավալները:

Հայաստանի Հանրապետությունում պետական ինովացիոն քաղաքականության նպատակը ինովացիոն գործունեության համար տնտեսական, իրավական և կազմակերպական պայմանների ապահովումն է: Ինովացիոն գործունեությունն իրականացվում է ՀՀ Սահմանադրությանը, «Ինովացիոն գործունեությանը պետական աջակցության մասին» ՀՀ օրենքին, ՀՀ այլ օրենքներին ու իրավական ակտերին, ինչպես նաև ինովացիոն գործունեությանը վերաբերող ՀՀ միջազգային պայմանագրերին համապատասխան: Ինովացիոն գործունեության տեսակներն են՝

- տնտեսական շրջանառության մեջ իրացվող, նոր կամ կատարելագործված տեխնոլոգիական գործընթացին, նոր կամ կատարելագործ-

[7] Տե՛ս **Шарп У.Ф., Александер Г.Д., Бэйли Д.В.,** Инвестиции. Учебное пособие, М., Издательство: НИЦ Инфра-М, 2016, 1040 с. ISBN 978-5-16-002595-7:

ված արտադրանքի ստեղծմանն ուղղված գիտահետազոտական, փորձակոնստրուկտորական և տեխնոլոգիական աշխատանքներ,
- մարքեթինգային հետազոտություններ՝ ինովացիոն արտադրանքի իրացման շուկաների կազմակերպման նպատակով,
- նոր կամ կատարելագործված ծառայության կամ արտադրանքի ստեղծման նպատակով տեխնոլոգիական վերազինում և արտադրության նախապատրաստում,
- նոր տեխնոլոգիական գործընթացների, արտադրանքի և ապրանքների փորձարկում, ստանդարտացում և հավաստագրում,
- տեխնոլոգիաների փոխանցում,
- նոր կամ կատարելագործված տեխնոլոգիայի կիրառման սկզբնական ժամանակահատվածում, մինչև ինովացիոն նախագծի հետգնման նորմատիվային ժամկետի լրանալը, նոր կամ կատարելագործված արդյունքի, նմուշի արտադրություն,
- ինովացիոն ենթակառուցվածքի ստեղծում և զարգացում,
- մտավոր սեփականության օբյեկտների, գաղտնի գիտական, գիտատեխնիկական և տեխնոլոգիական տեղեկատվության նկատմամբ իրավունքների ձեռք բերում և փոխանցում,
- ինովացիոն գործունեության ֆինանսավորում կամ համաֆինանսավորում, ներդրումներ ինովացիոն ծրագրերում և նախագծերում:

Ինովացիոն գործունեության ֆինանսավորումը կամ համաֆինանսավորումը կարող է իրականացվել հետևյալ աղբյուրներից՝
- **պետական բյուջեից.** ինովացիոն գործունեությանը պետական աջակցությունն իրականացվում է Ինովացիոն գործունեությանն աջակցության տարեկան ծրագրի սահմաններում՝ ՀՀ բյուջեով նախատեսված առանձին տողով,
- **ինովացիոն գործունեության սուբյեկտների միջոցներից,** այդ թվում՝ այլ աղբյուրներից ստացվող միջոցներից,
- **տեղական, օտարերկրյա ներդրողների և միջազգային ֆինանսական կազմակերպությունների ու հիմնադրամների միջոցներից**,
- **վենչուրային հիմնադրամներից:**

Հայաստանի Հանրապետությունը ինովացիոն գործունեության ոլորտում միջազգային համագործակցությունը խրախուսում է միջազգային պայմանագրերի, միջազգային ինովացիոն ծրագրերի և նախագծերի շրջանակներում: ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հանրապետության տարածքում օտարերկրյա քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց և օտարերկրյա իրավաբանական անձանց մասնակցությամբ կարող են ստեղծվել ինովացիոն գործունեությամբ զբաղվող կազմակերպություններ:

Ինչպես հայտնի է, Հայաստանի Հանրապետությունում ներդրումային գործունեությունը կարգավորվում է ՀՀ Սահմանադրությամբ[8], ՀՀ քաղաքացիական օրենսգրքով[9], «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքով[10], «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքով[11], «Բաժնետիրական ըն-

[8] Տե՛ս ՀՀ Սահմանադրություն (փոփոխություններով), ՀՀՊՏ 2005.12.05 /հատուկ թողարկում/:
[9] Տե՛ս ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, ՀՀՊՏ N 17(50), 10 օգոստոսի 1998 թ.:
[10] Տե՛ս «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենք, ՀՀ ՊՏ 2010.12.30/69(803) 1:
[11] Տե՛ս «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենք, ՀՀԳԽՏ 1994/14:

կերությունների մասին» ՀՀ օրենքով[12] և մի շարք այլ նորմատիվ իրավական ակտերով: Օտարերկրյա ներդրողները կարող են Հայաստանի Հանրապետության տարածքում ներդրումներ կատարել՝

- արտարժույթով, արժութային այլ արժեքներով, ՀՀ ազգային դրամով,
- շարժական ու անշարժ գույքով (շինություններ, շենքեր, սարքավորումներ և նյութական այլ արժեքներ) և դրա հետ կապված գույքային ցանկացած իրավունքով,
- բաժնետոմսերով, պարտատոմսերով, ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ արժեթղթերով,
- դրամական պահանջների ձևով և պայմանագրային արժեք ունեցող պարտավորությունների կատարման պահանջի իրավունքով,
- արժեք ունեցող մտավոր սեփականության ցանկացած իրավունքով,
- ՀՀ օրենսդրությամբ կամ պայմանագրով նախատեսված տնտեսական գործունեության իրավունքով, այդ թվում նաև՝ բնական ռեսուրսների հետախուզման, արդյունահանման, մշակման կամ շահագործման իրավունքով,
- վճարովի ծառայություններով,
- ՀՀ օրենսդրությամբ չարգելված ներդրումների ցանկացած տեսակով:

Սահմանված տեսակների օտարերկրյա ներդրումների արգելումը կամ սահմանափակումը կարող է կատարվել միայն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Օտարերկրյա ներդրողներն իրավունք ունեն ներդրումներ կատարել հետևյալ ձևերով.

- օտարերկրյա ներդրումներին ամբողջությամբ պատկանող ձեռնարկությունների, ինչպես նաև օտարերկրյա իրավաբանական անձանց պատկանող բաժանմունքներ, մասնաճյուղեր և ներկայացուցչություններ ստեղծելու կամ գործող ձեռնարկությունները որպես սեփականություն ձեռք բերելու միջոցով,
- ՀՀ իրավաբանական անձանց, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունների կամ ՀՀ քաղաքացիների մասնակցությամբ նոր ձեռնարկություններ հիմնադրելու կամ գործող ձեռնարկություններում բաժնեմաս ձեռք բերելու միջոցով,
- ՀՀ օրենսդրության շրջանակներում բաժնետոմսեր, պարտատոմսեր և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ արժեթղթեր ձեռք բերելու միջոցով,
- ինքնուրույն կամ ՀՀ իրավաբանական անձանց կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունների, ինչպես նաև ՀՀ քաղաքացիների մասնակցությամբ հողօգտագործման իրավունք և ՀՀ տարածքում բնական ռեսուրսների օգտագործման կոնցեսիաներ ձեռք բերելու միջոցով,
- գույքային այլ իրավունքներ ձեռք բերելու միջոցով,
- ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ ձևերով, մասնավորապես՝ ՀՀ իրավաբանական անձանց կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունների, ինչպես նաև ՀՀ քաղաքացիների հետ կնքված պայմանագրերի հիման վրա:

[12] Տե՛ս «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք, ՀՀՊՏ N 34(166), 6 նոյեմբերի 2001 թ.:

«Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքով[13] սահմանված արտոնությունները տարածվում են օտարերկրյա ներդրումներով ձեռնարկությունների վրա, որոնցում այդ ներդրումները հիմնադրման պահին կազմում են առնվազն 30%: Հաշվեկշռային գնահատման և հաշվառման նպատակով օտարերկրյա ներդրումներով ձեռնարկությունն իրականացնում է օտարերկրյա արժույթի վերահաշվարկ ՀՀ դրամի այն փոխարժեքով, որը որոշվում է «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքով և Հայաստանի Հանրապետության օրենսդրական այլ ակտերով:

ԻՆՈՎԱՑԻՈՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱԿՏԻՎԱՑՄԱՆ ՏԵՍԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Այժմ ներկայացնենք ինովացիոն և ներդրումային գործունեության ակտիվացման արտասահմանյան առաջատար փորձը:

1980 թվականից սկսած՝ Գերմանիայում նպատակ է դրվել մշակել միջին մակարդակի արդյունաբերության զարգացման արդյունավետ ռազմավարություն: Վերջինս ենթադրում է կատարելագործված արտադրական տեխնոլոգիաների և ծրագրային ապահովման միջոցների արագ և լայնածավալ օգտագործում[14]: Նշված ռազմավարության մեջ կարևորագույն տեղ էր զբաղեցնում խոշոր արդյունաբերությունը, ուստի դրա ֆինանսավորման բաժինը կազմել է զարգացմանն ու հետազոտություններին ուղղվող բոլոր միջոցների ավելի քան 2/3-ը: Մինչև 1990 թ. սկիզբը տեխնոլոգիաների և նորամուծությունների քաղաքականությունը գտնվում էր Դաշնային ֆոնդի վերահսկողության ներքո: Այնուհետև՝ 2006 թ., Գերմանիայում ընդունվել է Ինովացիոն և տեխնոլոգիական զարգացման ռազմավարությունը, ինչպես նաև որոշվել են երկրի նոր առաջնահերթությունները՝ հաշվի առնելով տեխնիկայի, գիտության և տեխնոլոգիաների զարգացման համաշխարհային միտումները: Փաստաթղթում ներկայացվել են 17 հիմնական հատվածներ, որոնք ազգային տնտեսության համար ունեցել են կարևորագույն նշանակություն[15]: Դրանց համար մշակվել է երկարաժամկետ զարգացման ծրագիր, որը հաջողությամբ իրականացվում է նաև ներկայում: Ինովացիոն և գիտահետազոտական քաղաքականության նոր գործիք է դարձել նաև ինովացիոն ալյանսների և ռազմավարական գործընկերությունների ստեղծումը: Ներկայում 6 ալյանս է ձևավորված կենսաբժշկության, էլեկտրոնիկայի, էներգետիկայի և օպտիկայի ոլորտներում: Վերջինս դարձել է Գերմանիայի արդյունաբերության ինովացիոն ակտիվության պահպանման գործուն մեխանիզմ:

1980 թ. Ճապոնիայի կառավարության որոշմամբ ստեղծվել են հատուկ տեխնոպարկեր[16]: Կառավարությունը սկսել է իրագործել տեխնոպոլիսների ստեղծման գլոբալ ծրագիր՝ որպես բարձր տեխնոլոգիական արդյունաբերության, գիտության և բնակության ազատ գոտիների հավասարակշռված ու ներդաշնակ համադրության միջոց: Բարձր տեխնոլոգիաների ոլորտում գործող ֆիրմաներին թույլատրվել է առաջին տարին չեղարկել (զեղչել) սարքա-

---

[13] Տե՛ս «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենք, ՀՀԳԽՏ 1994/14:

[14] Տե՛ս **Батрюмова Н.Н,** Технопарки как элемент инновационной экономики. Инновации, 2009, N1, էջ 16-19:

[15] Տե՛ս **Иванов С.И.,** Промышленная политика Китая: очередное достижение. Экономист, 2006, N1, էջ 56-60:

[16] Տե՛ս **Белов В.Н.,** К вопросу о российской инновационной политике. Зарубежный опыт. Инновационная политика и инновационный бизнес в России. Аналитический вестник, 2006, N5, էջ 16-27:

վորումների արժեքի մինչև 30%-ը և շենքերի ու շինությունների արժեքի մինչև 15%-ը: Միաժամանակ, պետությունը փոխհատուցել է փոքր ֆիրմաների և լաբորատորիաների գիտական հետազոտությունների ծախսերի 1/3-ը: Վերջին տարիներին արդյունաբերական միավորումների մասնակիցների համար զեղչերի քաղաքականության բազմազանությունը և ճկունությունը Ճապոնիայում ինովացիոն գործունեության կատարելագործման մեխանիզմի հիմնական գործիքներն են:

1970 թ. ԱՄՆ-ում նորագույն տեխնոլոգիաների տարածման հատուկ տեղեկատվական ծրագիր է ստեղծվել Գիտատեխնիկական տեղեկատվության ազգային կենտրոնի և Դաշնային լաբորատորիաների կոնսորցիումի կողմից, որը ներառում է 300 պետական գիտական բաժանմունքներ: Այդ ֆոնդերը պարունակում են 200 դաշնային կազմակերպությունների գիտական աշխատանքների վերաբերյալ գրառումներ, տվյալների 3/4-ը բաժին է ընկնում պաշտպանության և էներգետիկայի նախարարություններին, ինչպես նաև ՆԱՍԱ-ին: Գիտատեխնիկական տեղեկատվության ազգային կենտրոնը յուրաքանչյուր տարի համագործակցում է ԱՄՆ-ի 100 000 արդյունաբերական ֆիրմաների և գիտական կազմակերպությունների հետ[17]: ԱՄՆ-ի տնտեսության մեջ կիրառվել է պետության սեփականության ներքո գտնվող (կամ բյուջետային միջոցներով լաբորատորիաներից ձեռք բերված և արդյունաբերական հատվածին փոխանցված՝ ներառյալ երկրորդային օգտագործումը) նոր տեխնոլոգիաների և գիտատեխնիկական այլ արտադրանքների առևտրայնացման մեխանիզմը:

Աղյուսակ 1-ի միջոցով ներկայացնենք աշխարհի տարբեր երկրներում ինովացիոն գործունեության պետական աջակցության հիմնական ձևերը:

Անդրադառնալով ներդրումային ակտիվության պետական խթանման հիմնահարցերին՝ նշենք, որ ներդրումների արդյունավետ խթանումը պահանջում է կառավարման ժամանակակից մեթոդների կիրառում, նախագծային վերլուծություն, մարքեթինգի արդյունավետ գործիքակազմի կիրառում, ներդրողների պահանջներին արագ արձագանքելու կարողություն, մշտապես փոփոխվող շուկայական պայմաններում արագ կողմնորոշվելու հմտություն, ինչպես նաև ռազմավարական և մարտավարական նպատակների մշակման և իրագործման որոշակի ինքնուրույնություն: Համաշխարհային տնտեսական փորձը վկայում է, որ աշխարհում պատմականորեն ձևավորվել են ներդրումային ակտիվության խթանման պետական և պետական-մասնավոր կառույցներ: Հատկապես մեծ արդյունավետություն են ապահովում պետական-մասնավոր այն կառույցները, որոնք ունեն իրենց տնօրենների խորհուրդը, իրենց գործունեության համար հաշվետու են համապատասխան նախարարությանը՝ միաժամանակ չհանդիսանալով նրա մասը և իրենց անձնակազմում չեն ընդգրկում քաղաքացիական ծառայողներ: Ներդրումային ակտիվության խթանման բոլոր պետական-մասնավոր կառույցները պարունակում են և՛ պետական, և՛ մասնավոր հատվածների տիպային գծեր: Մասնավորապես, պետական կառույցների հետ կապերը նրանց թույլ են տվել առավել արդյունավետ կերպով սպասարկել ներդրողներին և պատշաճ կերպով իրականացնել իրենց գործառույթները՝ միաժամանակ լուծելով նաև սոցիալական կարևորագույն խնդիրներ:

---

[17] Տե՛ս **Попова А.О., Супян В.Б.,** Государственные научно-исследовательские лаборатории в США, научный журнал США и Канада: экономика, политика, культура. 2011 г., http://naukarus.com /gosudarstvennye-nauchno-issledovatelskie-laboratorii-v-ssha:

Աղյուսակ 1

Աշխարհի տարբեր երկրներում ինովացիոն գործունեության պետական աջակցության հիմնական ձևերը[18]

Հայաստանի Հանրապետություն[19]
• վենչուրային, ներդրումային հիմնադրամների ստեղծման և ինովացիոն գործունեության համար բարենպաստ իրավական դաշտի ձևավորում, • ֆինանսական և ներդրումային աջակցության, երաշխիքների տրամադրում, • պետական գույքի օգտագործման իրավունքի տրամադրում, • ինովացիոն ենթակառուցվածքների՝ գիտահինովացիոն կենտրոնների, հիմնադրամների, տեխնոպարկերի, բիզնեսի ինկուբատորների ստեղծմանն ու զարգացմանն աջակցություն, • ինովացիոն գործունեություն իրականացնող կադրերի պատրաստմանը, վերապատրաստմանը և որակավորման բարձրացմանն աջակցություն:
Ռուսաստանի Դաշնություն[20]
• ինովացիոն և ներդրումային գործունեության զարգացման պետական ծրագրեր, • բյուջետային ֆինանսավորմամբ գործող և հավանական օգտվողների լայն շրջանակին առկա գիտական արդյունքներն անհատույց տրամադրող խոշոր ազգային կենտրոնների /լաբորատորիաների/ ստեղծում, • կոնկրետ նախագծերի իրականացման համար սուբսիդիաների և դրամաշնորհների տրամադրում, • հարկային և մաքսային արտոնությունների տրամադրում, • պետական վարկերի և երաշխիքների տրամադրում, ինչպես նաև բաժնետիրական կապիտալում պետական մասնակցության միջոցով ֆինանսավորում, • կրթական ծառայությունների մատուցում, • տեղեկատվական աջակցության ցուցաբերում, • խորհրդատվական, ինչպես նաև նախագծային փաստաթղթերի ձևավորմանն աջակցություն, • ինովացիոն արտադրանքի համար պահանջարկի ձևավորում, • պետական նպատակային ծրագրերի իրագործում, • ինովացիոն արտադրանքների արտահանմանն աջակցություն, • ինովացիոն ենթակառուցվածքի ստեղծում:
Այլ երկրներ
• կառավարական կազմակերպությունների թեմատիկայով ԳՀՓԿԱ իրականացնող ձեռնարկություններին ֆինանսական և տեխնիկական աջակցության պետական ծրագրեր (ԱՄՆ, Ճապոնիա, Մեծ Բրիտանիա, Հնդկաստան, Չինաստան), • նոր արտադրանքի և տեխնոլոգիաների ստեղծման ծախսերի 50%-ին հասնող ուղղակի ֆինանսավորում սուբսիդիաների և փոխառությունների ձևով (Ֆրանսիա, ԱՄՆ), • վարկերի (նաև անտոկոս) տրամադրում (Շվեդիա), նորամուծությունների ներդրման ծախսերի 50%-ի չափով անհատույց վարկերի տրամադրում (Գերմանիա), • գիտահետազոտական աշխատանքների կատարման համար նպատակային դոտացիաների տրամադրում (գրեթե բոլոր զարգացած երկրներում), • ինովացիաների ներդրման ֆոնդերի ստեղծում՝ հաշվի առնելով հնարավոր առևտրային ռիսկերը (Մեծ Բրիտանիա, Գերմանիա, Ֆրանսիա, Շվեյցարիա, Նիդեռլանդներ), • անհատ գյուտարարների համար պետական տուրքերի նվազեցում և հարկային արտոնությունների տրամադրում (Ավստրիա, Գերմանիա, ԱՄՆ, Ճապոնիա), ինչպես նաև նրանց աջակցության և տնտեսական ապահովագրության համար հատուկ ենթակառուցվածքի ստեղծում (Ճապոնիա), • էներգիայի տնտեսմանն առնչվող գյուտերի համար տուրքերի վճարման հետաձգում կամ դրանցից ազատում (Ավստրիա), • ինովացիոն ոլորտում գործող ընկերությունների հարկագանձման մակարդակի նվազեցում, հարկերից ԳՀՓԿԱ-ների ազատում, հարկային արձակուրդներ, համալսարանների և գիտահետազոտական ինստիտուտների արտոնյալ հարկագանձում (ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Հնդկաստան, Չինաստան, Ճապոնիա), • հեղինակային իրավունքի արդյունավետ պաշտպանություն (ԱՄՆ, Ճապոնիա և այլն),

[18] Տե՛ս **Климова Н.В., Ларина Н.В.,** Зарубежный опыт стимулирования инновационной деятельности в промышленном секторе. Фундаментальные исследования. 2014, № 6-7, էջ 1442-1446. URL: http://www.fundamental-research.ru/ru/article/view?id=34358:

[19] Տե՛ս «Ինովացիոն գործունեության պետական աջակցության մասին» ՀՀ օրենք, ՀՀՊՏ N 33 (488), 28 հունիսի 2006 թ.:

[20] Տե՛ս Федеральный закон “О науке и государственной научно-технической политике” от 07.05.2013, № 93-ФЗ:

- ինովացիոն նախագծերի ֆինանսավորման համար վենչուրային կապիտալի լայն ցանցի ստեղծում (զարգացած և զարգացող երկրների մեծամասնությունում),
- գիտական պարկերի, բիզնես-ինկուբատորների և տեխնոլոգիական զարգացման գոտիների ցանցի ստեղծում (զարգացած և զարգացող երկրների մեծամասնությունում),
- ինովացիոն ՓՄՁ-ներին համակողմանի գիտատեխնիկական, ֆինանսական և արտադրական աջակցություն ցուցաբերող հզոր պետական կազմակերպությունների (կորպորացիաների, գործակալությունների) ստեղծում (ԱՄՆ, Ճապոնիա, Հնդկաստան, Չինաստան և այլն):

Ակնհայտ է, որ ինովացիոն և ներդրումային ակտիվության խթանման մակարդակով է պայմանավորված ցանկացած երկրում օտարերկրյա ուղղակի ներդրումների ծավալների աճը: Հետևաբար աղյուսակ 2-ի միջոցով ներկայացնենք նաև աշխարհի տարբեր երկրների վարկանիշն ըստ օտարերկրյա ուղղակի ներդրումների մակարդակի:

Աղյուսակ 2

Աշխարհի տարբեր երկրների վարկանիշն ըստ օտարերկրյա ուղղակի ներդրումների մակարդակի (2018 թ.)[21]

Վարկանիշը	*Երկիրը*	*ՕՈՒՆ-ի չափը, մլն դոլար*
1	ԱՄՆ	354.828.00
2	Նիդեռլանդներ	316.541.43
3	Չինաստան	168.223.58
4	Հոնկոնգ	122.401.06
5	Գերմանիա	77.983.39
6	Բրազիլիա	70.685.05
7	Մեծ Բրիտանիա	64.685.40
8	Սինգապուր	63.633.43
9	Ֆրանսիա	47.335.62
10	Ավստրալիա	42.579.72
134	Հայաստան	249.76
189	Բելգիա	-39.482.28

Ըստ աղյուսակ 2-ի՝ 2018 թ. Հայաստանի Հանրապետությունը 189 երկրների շարքում, ըստ օտարերկրյա ուղղակի ներդրումների մակարդակի, զբաղեցրել է 134-րդ տեղը, ինչը նշանակում է, որ օտարերկրյա ուղղակի ներդրումների ներգրավման գործընթացում դեռ բավականին անելիք ունենք: Առաջին հերթին, անշուշտ, անհրաժեշտ է խթանել հայրենական ներքին ներդրումները, որպեսզի օտարերկրյա ներդրողներն ավելի մեծ պատրաստակամությամբ և վստահությամբ ներդրումներ կատարեն մեր երկրում: Ուստի գծապատկեր 1-ի միջոցով ներկայացնենք ԽՍՀՄ տարածքի երկրներում իրականացված օտարերկրյա ուղղակի ներդրումների մակարդակը:

Ինչպես վկայում են գծապատկեր 1-ի տվյալները, 2018 թ. ՕՈՒՆ-ի մակարդակով առաջատարն է Ռուսաստանի Դաշնությունը, հաջորդիվ՝ Ղազախստանը, Ուկրաինան, Թուրքմենստանը, Վրաստանը և Էստոնիան: Հայաստանի Հանրապետությանը զիջում են Ղրղզստանը, Ուզբեկստանը, Տաջիկստանը և Մոլդովան: Նշենք նաև, որ Ռուսաստանի Դաշնությունը, լինելով ԽՍՀՄ տարածքի երկրների շարքում ՕՈՒՆ-ի մակարդակով առաջատար երկիրը, մեծածավալ ներդրումներ է կատարում նաև Հայաստանի Հանրապետությունում՝ նպաստելով մեր երկրի տնտեսության զարգացմանը:

[21] Տե՛ս Рейтинг стран мира по уровню прямых иностранных инвестиций (ПИИ), https://gtmarket.ru/research/foreign-direct-investment-index/info:



Գծապատկեր 1. *ԽՍՀՄ տարածքի երկրներում իրականացված օտարերկրյա ուղղակի ներդրումների մակարդակը (2018 թ.)*[22]

Ինչպես հայտնի է, ինովացիոն և ներդրումային ակտիվությունը մեծապես պայմանավորված է նաև տարեկան միջին գնաճի տեմպով, քանի որ վերջինս մեծ ազդեցություն ունի ընկերությունների ստացած իրական եկամտի վրա: Գծապատկեր 2-ի միջոցով ներկայացնենք նաև ՀՀ տարեկան միջին գնաճի ցուցանիշը:



Գծապատկեր 2. *ՀՀ տարեկան միջին գնաճը 2008-2018 թթ. (տոկոս)*[23]

Ակներև է, որ ՀՀ-ում տարեկան միջին գնաճի ցուցանիշը, 2014 թվականից սկսած, որոշակի կայունություն է դրսևորել 2008, 2010, 2011 և 2013 թթ. համեմատությամբ: 2018 թ., 2017-ի համեմատությամբ, նկատվել է փոքր միջին տարեկան գնաճ՝ ընդամենը 1 տոկոսային կետով, ինչը, կարծում ենք, դրական երևույթ է:

[22] Տե՛ս նույն տեղը:
[23] Տե՛ս ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական կայք, https://www.cba.am/am/SitePages/Default.aspx:

Ինովացիոն և ներդրումային ակտիվությունը մեծապես պայմանավորված է նաև տվյալ երկրի տնտեսական ակտիվության ցուցանիշով, որն ամփոփ կերպով արտացոլում է երկրի տնտեսական զարգացման միտումները: Գծապատկեր 3-ի միջոցով ներկայացնենք նաև այդ ցուցանիշը:

Ինչպես աշխարհի ցանկացած երկրում, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունում անխուսափելի են տնտեսական վայրիվերումները, հատկապես՝ համաշխարհային քաղաքական ու տնտեսական բուռն զարգացումների պայմաններում: Անշուշտ, վերջիններով է որոշակիորեն պայմանավորված նաև գծապատկեր 3-ում ներկայացված ՀՀ տնտեսական ակտիվության ցուցանիշի տատանումը: Սակայն նկատենք, որ ստեղծված իրավիճակի բարելավման համար մեր երկրում առկա են ծանրակշիռ ներքին լծակներ: Մասնավորապես բարձր տեխնոլոգիական ոլորտի գործունեության ընդլայնումն ու արտադրանքի ներդրումն այլ՝ զարգացման կարիք ունեցող ոլորտներում կարող են որոշակի դրական տեղաշարժեր առաջացնել Հայաստանի Հանրապետության տնտեսական համակարգում:



Գծապատկեր 3. *ՀՀ տնտեսական ակտիվության ցուցանիշը 2008-2018 թթ. (տոկոս)*[24]

Եզրակացություններ և առաջարկություններ: Ժամանակակից տնտեսական պայմաններում բարձր տեխնոլոգիական ոլորտի ընկերությունների գործունեության բարելավումն ունի կարևոր ռազմավարական նշանակություն, քանի որ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքների հաղթահարումը և կայուն տնտեսական աճի ապահովումն անխզելիորեն կապված են բարձր տեխնոլոգիական ընկերությունների գործունեության ակտիվացման հետ: Բարձր տեխնոլոգիական ոլորտի ընկերությունների ինովացիոն գործունեության կառավարման բարելավման համատեքստում հատկապես կարևորվում են.

- արտաքին միջավայրի վերլուծությունը և դրանում տեղի ունեցող փոփոխությունների կանխատեսումը,
- ընկերության ներքին միջավայրի վերլուծությունը,
- ինովացիոն զարգացման նախագծերի իրագործման համար նպատակային շուկաների ստեղծումը,

[24] Տե՛ս ՀՀ վիճակագրական կոմիտեի պաշտոնական կայք, https://www.armstat.am/am/:

- ինովացիոն զարգացման փուլերում ռիսկերի վերլուծությունը և քանակական գնահատումը,
- գործունեության գերակա ուղղությունների առանձնացումը,
- կառավարման կազմակերպական կառուցվածքի արդյունավետ ձևավորումը,
- ընտրված ուղղություններով ընկերության արտադրահիրացումային և ֆինանսական գործունեության հստակ պլանավորումը,
- ինովացիոն զարգացմանն ուղղված միջոցառումների կազմակերպման հանդեպ հետևողական հսկողությունը,
- գերակայությունների փոփոխման վերաբերյալ որոշումների ճիշտ ժամանակին ընդունումը և ինովացիոն գործունեության նոր ուղղությունների որոնումը:

ՀՀ տնտեսության զարգացման ներկա փուլում բարձր տեխնոլոգիական ընկերությունների գործունեության կազմակերպումը հատկապես նպատակահարմար է ազատ տնտեսական գոտիներում, քանի որ այնտեղ ստեղծված են բիզնեսի վարման հատուկ բարենպաստ պայմաններ, մասնավորապես.

1. Արտաքին առևտրային արտոնություններ, որոնք նախատեսում են հատուկ մաքսային սակագնային ռեժիմի և առևտրային գործարքների պարզեցված կարգի սահմանում:

2. Հարկային արտոնություններ, որոնք ներառում են ձեռնարկատերերի գործունեությունը և վարքագիծը խթանող նորմեր: Այդպիսի արտոնությունները կարող են վերաբերել հարկման բազային, հարկային դրույքների մակարդակին, հարկումից ժամանակավոր կամ իսպառ ազատմանը և այլն:

3. Ֆինանսական արտոնություններ, որոնք ներառում են տարբեր տեսակի ծառայությունների նկատմամբ իջեցված գները, հողային և արտադրական տարածքների օգտագործման ցածր վարձավճարները:

4. Վարչական արտոնություններ, որոնք տրամադրվում են ազատ գոտու վարչակազմի կողմից ձեռնարկությունների գրանցման ընթացակարգը և օտարերկրացիների մուտքի-ելքի վիզային ռեժիմը պարզեցնելու, նաև տարբեր տեսակի ծառայություններ մատուցելու համար:

Ներկայում բարձր տեխնոլոգիական ոլորտի ընկերությունների գործունեության խթանման հիմնական ուղղություններն են հարկային, մաքսային, վարկային ֆինանսավորումը (վենչուրային ֆինանսավորումը, բաժնետիրական ֆինանսավորումը՝ բաժնետոմսերի թողարկումը), պետական աջակցությունը (բարձր տեխնոլոգիական ընկերությունների գործունեության կառավարման ոլորտում օրենսդրական բարեփոխումները, օպտիմալ կառուցվածքի և գործառույթների նախագծումը, տնտեսության մեջ դրանց դերի և ճանաչելիության բարձրացումը, տեխնոլոգիական զարգացման արդյունավետ նախագծերի իրացմանը պետական աջակցության ցուցաբերումը, համապատասխան ենթակառուցվածքների և կլաստերների ստեղծումը, ֆինանսական ներարկումները, համատեղ ներդրումները) և այլն:

Ժամանակակից պայմաններում ՀՀ բարձր տեխնոլոգիաների ոլորտի գերակա խնդիրներն են ինժեներական կրթությունը, նորագույն տեխնոլոգիաների յուրացումը և դրանց հիման վրա ինովացիոն մշակումների իրականացումը: ՀՀ-ում անհրաժեշտ է ավելացնել բարձր տեխնոլոգիական և ինովացիոն ընկերությունների թվաքանակը, որոնք իրենց հետ մեր երկիր կբերեն

նոր տեխնոլոգիաներ և կօգնեն այլ ընկերություններին՝ յուրացնել դրանք: Վերջիններս կարող են լինել արտահանման ուղղվածությամբ ինչպես արտասահմանյան, այնպես էլ տեղական ընկերությունները: Միաժամանակ, հայկական բարձր տեխնոլոգիական ընկերությունները պետք է ներգրավված լինեն նաև թվայնացման և կիբեռանվտանգության ապահովման գործընթացներում:

Հաշվի առնելով ՀՀ տնտեսության զարգացման ներկայիս վիճակը՝ կարող ենք առաջարկել ինովացիոն և ներդրումային գործունեության ակտիվացման հետևյալ ուղիները.

1. ***Ինստիտուցիոնալ և իրավական կանոնակարգված դաշտի ստեղծում:*** Ակնհայտ է, որ ինովացիոն քաղաքականության արդյունավետությունը հնարավոր է ապահովել ինստիտուցիոնալ և իրավական կանոնակարգված դաշտի առկայության պայմաններում: Դրա բացակայության դեպքում առնվազն անհրաժեշտ է.

- գիտական հետազոտությունների, հիմնավորված մշակումների և հայտնագործությունների իրականացում,
- արտադրության կառուցվածքի կատարելագործում և շարունակական արդիականացում,
- ինովացիոն գործունեության համար անհրաժեշտ ռեսուրսային բազայի ապահովում,
- կառավարման համակարգը ժամանակի պահանջներին համապատասխանեցման ներուժի առկայություն:

2. ***Ինովացիոն արտադրանքների համար պահանջարկի ձևավորում, այդ թվում՝ պետական պատվերի միջոցով:*** Անշուշտ, ինովացիոն և ներդրումային գործունեության ակտիվացման գործում մեծ դերակատարում ունի պետական պատվերը, որը թույլ է տալիս ընդհանուր տնտեսական իրավիճակի վրա արդյունավետ կերպով ներազդել ներդրումային շրջափուլի անկման և վերելքի հատվածներում: Զարգացած երկրներում վերելքի հատվածներում շահույթի «պրոգրեսիվ հարկման» միջոցով ստեղծվում են «հակաշրջափուլային» ներդրումային ֆոնդեր, որոնք օգտագործվում են անկման հատվածում ներդրումների ընդունելի մակարդակի պահպանման նպատակով: Այս մոտեցումը կիրառվել է Շվեդիայում, Դանիայում, Գերմանիայում, Ֆինլանդիայում, Ֆրանսիայում և Իսպանիայում[25]: Զարգացած երկրների (ԱՄՆ, Արևմտյան Եվրոպայի երկրներ, Ճապոնիա) ներդրումային ոլորտում պետական պատվերի ձևավորման հիմքն են հանդիսանում անհրաժեշտ արտադրանքի ծավալների ավելացման, բարձր տեխնոլոգիական արտադրանքի նոր տեսակների արտադրության, բնական ռեսուրսների հանքավայրերի յուրացման որոշակի նպատակների իրագործման համար պետական կամ տարածաշրջանային մակարդակի երկարաժամկետ նպատակային ծրագրերը: Այս փորձը կարող է դրական արդյունք ապահովել նաև ՀՀ-ում:

3. ***Բաժնետոմսերում ներդրումների խթանում:*** Ներդրումային ակտիվության բարձրացման գործում էական է ընկերությունների բաժնետոմսերում ներդրումների դերը: Դրանց խթանումը հրատապ խնդիր է հատկապես Հայաստանի համար, քանի որ հանրապետության ֆինանսական ակտիվների 90%-ից ավելին կենտրոնացված է բանկային համակարգում: Վերջինս, լինե-

[25] Տե՛ս **Булавко О.А.,** Зарубежный опыт регулирования и стимулирования инвестиционной сферы, научный журнал Общество. Среда. Развитие, https://cyberleninka.ru/article/n/zarubezhnyy-opyt-regulirovaniya-i-stimulirovaniya-investitsionnoy-sfery:

լով ֆինանսական համակարգի կարևորագույն ենթահամակարգերից մեկը, միաժամանակ հանդես է գալիս որպես ֆինանսական ռեսուրսների օգտագործման պասիվ գործակալ, հետևաբար՝ ֆինանսական այլ ավելի ճկուն լծակների օգտագործումը դառնում է օբյեկտիվ անհրաժեշտություն: Այդ ուղղությամբ ցանկալի արդյունքի հասնելու նպատակով բաժնետիրական ընկերությունները, ֆինանսական շուկայի այլ մասնակիցների հետ համագործակցելու համար, պետք է գտնվեն մրցակցության մեջ: Ակնհայտ է, որ այս պարագայում բաժնետիրական ընկերություններից կպահանջվի ապահովել բաժնետոմսերի գրավչության բարձր մակարդակ, ինչն էլ կնպաստի բնակչության ազատ դրամական միջոցների ռացիոնալ տեղաբաշխմանը և ֆինանսական համակարգի համաչափ զարգացմանը: Այդ իսկ պատճառով ընկերությունները հասարակությանը պետք է առաջարկեն այնպիսի պարտատոմսեր, որոնք կունենան բանկային ավանդների և դեպոզիտների դիմաց ստացվող եկամուտներին համարժեք շահութաբերություն: Ֆինանսավորման այս աղբյուրից բացի, ընկերությունները կարող են թողարկել նաև ապագայում բաժնետոմսերով փոխարկելի պարտատոմսեր: Այդպիսով քաղաքացին հնարավորություն է ստանում ընտրություն կատարել պարտատոմսերի և բաժնետոմսերով փոխարկելի պարտատոմսերի միջև: Այստեղ փոքր չէ այն հավանականությունը, որ պարտատոմսերի սեփականատերերը ընկերությունների հետ կայուն և փոխշահավետ գործընկերային կապերի առկայության պայմաններում դառնան տվյալ ընկերության բաժնետերեր: Բաժնետոմսերի գրավչության բարձրացման գործում մեծ կարող է լինել պետական և պետական մասնակցությամբ ընկերությունների գործոնը: ՀՀ-ում այն հատկապես պետք է կարևորել, քանի որ տնտեսությունների զարգացման միջազգային փորձը բազմիցս է ապացուցել պետական և պետական մասնակցությամբ ընկերությունների դերակատարման կարևորությունը, հատկապես՝ ճգնաժամային պայմաններում: Հայտնի *աուդիտորական-խորհրդատվական* ընկերությունների կողմից իրականացված հարցման արդյունքները վկայում են, որ պետական ձեռնարկությունները կարող են հաջողությամբ մրցակցել մասնավորների հետ, իսկ որոշ երկրներում հարցվողների մի զգալի մասը կարծում է, որ ռազմավարական բնույթի ճյուղերի հանդեպ պետական վերահսկողությունը տվյալ երկրի շահերի տեսանկյունից ունի սկզբունքային նշանակություն:

4. ***Հարկային և մաքսային արտոնությունների տրամադրում***, մասնավորապես՝ ինովացիոն ոլորտում գործող ընկերությունների հարկագանձման մակարդակի նվազեցում, ԳՀՓԿԱ-ներին հարկերից ազատում, հարկային արձակուրդների տրամադրում, համալսարանների և գիտահետազոտական ինստիտուտների արտոնյալ հարկագանձում: Հաշվի առնելով ՀՀ ընկերությունների ֆինանսական ռեսուրսների սահմանափակության խնդիրը՝ գործարարության խթանման, ինովացիոն և ներդրումային գործունեության ակտիվացման նպատակով անհրաժեշտ է հարկային օրենսդրությունը կատարելագործել հետևյալ ուղիներով.

- բարեխիղճ հարկատու հանդիսացող և ժամանակավոր ֆինանսական խնդիրներ ունեցող ընկերություններին տրամադրել 0,5-1,5 տարի ժամկետով հարկային արձակուրդներ՝ ելնելով դրանց ֆինանսական խնդիրների բարդության աստիճանից,

- ինովացիոն գործունեության խթանման նպատակով ՀՀ տնտեսության զարգացման համար ռազմավարական նշանակություն ունեցող բաժնետիրական ընկերություններին պարբերաբար տրամադրել հարկային արձակուրդներ՝ ելնելով ինովացիոն մշակումների ժամանակային առանձնահատկություններից,
- ընկերություններին ԳՀՓԿԱ-ների մասով հարկերից ազատում, ինչպես նաև համալսարանների և գիտահետազոտական ինստիտուտների արտոնյալ հարկագանձում:

Անշուշտ, Հայաստանի Հանրապետությունում բաժնետիրական ընկերությունների ներդրումային քաղաքականության արդյունավետության բարձրացման նպատակով անհրաժեշտ է վերանայել նաև Հարկային օրենսգրքի այն դրույթը, ըստ որի՝ հարկվող եկամուտ են նաև բաժնետոմսերից ստացված շահաբաժինները: Ակնհայտ է, որ ՀՀ տնտեսության զարգացման ներկա փուլում նման մոտեցումը որոշակիորեն զսպում է բաժնետիրական ընկերությունների ներդրումային ակտիվությունը: Նման իրավիճակից խուսափելու համար որոշ դեպքերում անհրաժեշտ է համակողմանիորեն գնահատել «հարկային արձակուրդներ» սահմանելու և այն կիրառելու նպատակահարմարության հարցը:

Նպատակահարմար ենք համարում նաև փոքր և միջին ձեռնարկություններին 1-2 տարի ժամկետով տրամադրել հարկային արձակուրդներ՝ կախված դրանց ֆինանսատնտեսական վիճակից, մասնավորապես.

- սնանկացման վտանգի դեպքում (1-5 տարի),
- ֆինանսական առողջացման ժամանակահատվածում (մինչև 1 տարի),
- առանձնացման և բաժանման ճանապարհով վերակազմակերպման դեպքում (1-3 տարի),
- նոր պետական գրանցում ստացած անհատ ձեռնարկատերերին (ԱՁ) 2 տարի ժամկետով ազատել հարկերի վճարումից (ՌԴ-ում այս կարգը գործում է 2017 թ. հունվարի 1-ից):

5. ***ՓՄՁ ոլորտի ընկերությունների ինովացիոն գործունեության խթանում:*** Բարձր տեխնոլոգիական արտադրությամբ կամ այդ արտադրանքի օգտագործմամբ պետք է հետաքրքրված լինեն նաև մասնավոր ընկերությունները, հատկապես՝ փոքր ու միջին բիզնեսի ոլորտին պատկանող: Վերջինս պայմանավորված է նրանով, որ ժամանակի ընթացքում փոքր ընկերությունները վերաճում են միջինների, իսկ միջինները՝ խոշորների: Սա հնարավոր է ապահովել նաև ՀՀ-ում՝ SS ոլորտի արտադրանքը ծառայեցնելով նշված ընկերությունների զարգացման տեմպերի արագացմանը: Այստեղ հատկապես հրատապ խնդիր է պետական աջակցության ցուցաբերումը՝ SS ոլորտի ընկերություններին հարկային, մաքսային, վարկային և այլ արտոնությունների տրամադրման միջոցով, որի դիմաց նշված ընկերությունները որոշակի ժամանակահատվածում մատչելի գներով կամ անհատույց (կախված տվյալ իրավիճակից) SS ոլորտի արտադրանք են մատակարարում ՀՀ տնտեսության զարգացման համար ռազմավարական նշանակություն ունեցող մասնավոր, պետական և պետական մասնակցությամբ ընկերություններին:

6. ***Ներդրումային և ինովացիոն գործունեության ապահովագրում:*** Ներդրումային և ինովացիոն գործունեության արդյունավետության բարձրացման կարևոր գործոն է ներդրումների ապահովագրումը: Ակնհայտ է, որ այն կհանգեցնի ֆինանսական ռիսկերի նվազեցմանը, ինչպես նաև ապահովագրական

ընկերությունների գործունեության ակտիվացմանը: Այս հանգամանքը սկզբունքային նշանակություն ունի ՀՀ ֆինանսական համակարգի կայունացման և դրա հետագա զարգացման գործում: Ներկայում հանրապետությունում գործող ապահովագրական ընկերություններն ունեն հաճախորդների ներգրավման խնդիր: Դրա լուծման գործում ապահովագրական ընկերություններին հիմնականում աջակցում են բանկերը՝ իրենց հաճախորդներին պարտադրելով ապահովագրել գրավի առարկա հանդիսացող, ինչպես նաև վարկային ռեսուրսների հաշվին ձեռք բերված անշարժ և շարժական գույքը: Ապահովագրական գործի աշխուժացմանը նպաստում են նաև Հայաստանում գործունեություն ծավալող արտասահմանյան ընկերությունները, որոնց կանոնադրությամբ սահմանված է ընկերության սեփականության պարտադիր ապահովագրության պահանջ, այլ խոսքով՝ իրականացնելով ներդրումների ապահովագրում՝ նրանք կնպաստեն այդ համակարգի գործունեության բարելավմանը, իսկ վերջինս, հանդիսանալով ֆինանսական շուկայի կարևորագույն ենթահամակարգերից մեկը, իր ընկերություններով կարող է հանդես գալ նաև որպես ինստիտուցիոնալ ներդրող և նպաստել ինչպես առկա ներդրումային ռեսուրսների սակավության հիմնախնդրի հաղթահարմանը, այնպես էլ արժեթղթերի շուկայի որոշակի աշխուժացմանը:

7. ***Ինովացիոն լիզինգի կիրառում:*** ՀՀ ընկերությունների ինովացիոն և ներդրումային գործունեության ակտիվացմանը մեծապես կարող են նպաստել նաև լիզինգային գործարքները: Վարկերի համեմատությամբ դրանք ունեն որոշակի առավելություններ, քանի որ չեն պահանջում գրավի առարկայի ներգրավում, իսկ ֆինանսական լիզինգի դեպքում մարման ժամկետի տևողությունը համապատասխանում է լիզինգի առարկայի շահագործման ժամկետներին, այն դեպքում, երբ վարկավորման ընթացքում այդ ժամկետը, որպես կանոն, զգալիորեն փոքր է: Ժամանակակից տնտեսական պայմաններում ՀՀ ընկերությունների գործունեության բարելավման համար հատկապես պահանջարկված կարող է դառնալ ինովացիոն լիզինգը: «Ինովացիոն լիզինգ» կատեգորիան արտացոլում է ինովացիոն գործունեության ընթացքում հիմնական միջոցների շարքին դասվող շարժական և անշարժ գույքի հետ կապված տնտեսական հարաբերությունների յուրահատուկ տեսակը դրա սուբյեկտների՝ լիզինգատուի, լիզինգառուի և լիզինգի օբյեկտի վաճառողի միջև: Ինովացիոն է համարվում այնպիսի գործունեությունը, որի նպատակն է որևէ նորույթ պարունակող նյութական արժեքների արտադրությունը, փոխանակությունը, բաշխումը և սպառումը: Այս գործունեությունը կարող է ուղղված լինել ինչպես նոր, այնպես էլ արդեն գոյություն ունեցող ապրանքների արտադրությանը, սակայն նոր եղանակներով կամ տեխնոլոգիաներով: Ինովացիոն լիզինգը ինովացիոն գործունեությունն է կամ շուկայում ինովացիոն արտադրանքի առաջմղումն ապահովող ներդրումների տեսակ: Հասկանալի է, որ ճգնաժամային տնտեսության պայմաններում հենց այս տեսակի ներդրումներն են ամենապահանջարկվածները, քանի որ դրանք կարող են էապես դրական տեղաշարժեր առաջացնել տնտեսության մեջ:

8. ***Պետական և պետական մասնակցությամբ ընկերություններում ինովացիոն արտադրության խթանում:*** Ինովացիոն և ներդրումային գործունեության ակտիվացման գործում մեծապես կարևորվում է պետական և պետական մասնակցությամբ ընկերությունների գործունեության բարելավումը, մասնավորապես՝ դրանց վերակազմակերպումը և վերապրոֆիլավորումը՝

բարձր տեխնոլոգիական արտադրության կամ այդ արտադրանքի օգտագործման շեշտադրմամբ: Վերջինս հատկապես հրատապ խնդիր է ռազմարդյունաբերության, թեթև արդյունաբերության, քիմիական արդյունաբերության, բնապահպանության ու ընդերքօգտագործման ոլորտներում, որոնք ունեն զարգացման առաջնահերթ կարիք և հնարավորություն են ընձեռում՝ առավել արդյունավետ կերպով իրագործել պետական կառավարման գործառույթը:

9. ***Կորպորատիվ մշակույթի արմատավորում ու գործունեության թափանցիկության ապահովում:*** Բաժնետիրական ընկերությունների ներդրումային և ինովացիոն գործունեության բարելավումը, տարածաշրջանային համագործակցության ակտիվացումը մեծապես պայմանավորված են նաև կորպորատիվ մշակույթի առկայությամբ (և, հատկապես, բաժնետերերի իրավունքների պաշտպանությամբ): Հարկ է նշել, որ եթե նախկինում արտասահմանյան ներդրողները մեծ ուշադրություն չէին դարձնում զարգացող երկրների ընկերությունների ֆինանսական թափանցիկության ու կորպորատիվ մշակույթի առկայության հիմնահարցերին, ապա ներկայում իրավիճակն արմատապես փոխվել է, և ներդրումային որոշումներ ընդունելիս զարգացած կորպորատիվ մշակույթի ու բիզնեսի ֆինանսական թափանցիկության առկայությունը դառնում է վճռորոշ գործոն: Հետևաբար, ՀՀ ընկերությունները մեծ ուշադրության պետք է արժանացնեն կորպորատիվ մշակույթի արմատավորմանն ու գործունեության թափանցիկության ապահովմանը:

Հայաստանի Հանրապետությունում ինովացիոն և ներդրումային գործունեության ակտիվացմանը զգալիորեն կարող են նպաստել նաև ինովացիոն արտադրանքների արտահանմանն աջակցությունը, ինովացիոն ենթակառուցվածքի, գիտատեխնիկական պարկերի, բիզնես-ինկուբատորների, տեխնոպոլիսների, արտադրական կլաստերների և տեխնոլոգիական զարգացման գոտիների ցանցի ստեղծումը, արտադրական ձեռնարկությունների, գիտական և կրթական հաստատությունների միջև արդյունավետ համագործակցության ապահովումը, գիտահետազոտական աշխատանքների համար նպատակային դոտացիաների հատկացումը, պետական վարկերի և երաշխիքների տրամադրումը, ինչպես նաև բաժնետիրական կապիտալում պետական մասնակցության միջոցով ինովացիոն և ներդրումային գործունեության ֆինանսավորումը:

Ամփոփենք՝ Հայաստանի Հանրապետությունում ինովացիոն և ներդրումային գործունեության ակտիվացման արտասահմանյան առաջատար փորձի կիրառումը կնպաստի նոր աշխատատեղերի ստեղծմանը, բնակչության կենսամակարդակի բարելավմանը, գնողունակ պահանջարկի խթանմանը, արտադրության ծավալների ավելացմանը, ինովացիոն արտադրանքի ստեղծման գործընթացի արագացմանը, համաշխարհային շուկայում ՀՀ մրցունակության բարձրացմանը և տնտեսության երկարատև կայուն զարգացմանը:

Օգտագործված գրականություն

1. ՀՀ Սահմանադրություն (փոփոխություններով), ՀՀՊՏ 2005.12.05 /հատուկ թողարկում/:
2. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, ՀՀՊՏ N17(50), 10 օգոստոսի 1998 թ.:
3. «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք, ՀՀՊՏ N 34 (166), 6 նոյեմբերի 2001 թ.:
4. «Ինովացիոն գործունեության պետական աջակցության մասին» ՀՀ օրենք, ՀՀ ՊՏ N 33(488), 28 հունիսի 2006 թ.:
5. «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենք, ՀՀՊՏ 2010.12.30/ 69(803).1:
6. «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենք, ՀՀԳԽՏ 1994/14:
7. Батрюмова Н.Н., Технопарки как элемент инновационной экономики. Инновации, 2009, N1.
8. Белов В.Н., К вопросу о российской инновационной политике. Зарубежный опыт. Инновационная политика и инновационный бизнес в России. Аналитический вестник , 2006, N5.
9. Богатова Е.В., Инновационная экономика: монография, М., издательство “Русайнс”, 2014.
10. Булавко О.А., Зарубежный опыт регулирования и стимулирования инвестиционной сферы, научный журнал Общество. Среда. Развитие. https://cyberleninka.ru/article/n/zarubezhnyy-opyt-regulirovaniya-i-stimulirovaniya-investitsionnoy-sfery.
11. Гончаренко Л.П., Инновационный менеджмент: Учебник для вузов. 2-е изд. Издательство Российского экономического университета имени Г.В. Плеханова, М., 2018.
12. Иванов С.И., Промышленная политика Китая: очередное достижение. Экономист, 2006, N1.
13. Климова Н.В., Ларина Н.В., Зарубежный опыт стимулирования инновационной деятельности в промышленном секторе. Фундаментальные исследования. 2014, №6-7. URL: http://www.fundamental-research.ru/ru/article/view?id=34358.
14. Попова А.О., Супян В.Б., Государственные научно-исследовательские лаборатории в США, научный журнал США и Канада: экономика, политика, культура. 2011, http://naukarus.com/gosudarstvennye- nauchno-issledovatelskie-laboratorii-v-ssha.
15. Рейтинг стран мира по уровню прямых иностранных инвестиций (ПИИ),https://gtmarket.ru/research/foreign-direct-investment-index/info.
16. Фатхутдинов Р.А., Инновационный менеджмент. Учебник для вузов. 6-е изд., СПб., Питер, 2011.
17. Федеральный закон “О науке и государственной научно-технической политике” от 07.05.2013 № 93-ФЗ.
18. Чижова Л.С., Инновационная экономика: занятость, трудовая мотивация, эффективность труда: монография. М., Экономика, 2011.
19. Шарп У.Ф., Александер Г.Д., Бэйли Д.В., Инвестиции. Учебное пособие, М., Издательство: НИЦ Инфра-М, 2016.
20. Afuah A., Innovation Management: Strategies, Implementation, and Profits. Oxford University Press; 2-nd edition, 2002.
21. Govindarajan V., Trimble C., The Other Side of Innovation: Solving the Execution Challenge. Harvard Business Review, 2010.

ВАРДАН БОСТАНДЖЯН
Профессор кафедры финансового учета ЕГУ,
доктор экономических наук

АРМИНЕ ЗАХАРЯН
Научный работник Института экономики
им.М. Котаняна НАН РА, кандидат экономических наук

Проблемы стимулирования инновационной деятельности в Республике Армения.– Статья посвящена изучению методов и механизмов активизации инвестиционной и инновационной деятельности в Республике Армения, факторов, обусловливающих эффективное применение данных методов и механизмов, возможных источников финансирования инновационных и инвестиционных проектов, а также зарубежного передового опыта стимулирования инновационной и инвестиционной активности.

Уязвимые стороны сформировавшейся в Армении нынешней системы экономических отношений, сложное геополитическое положение республики, обстоятельства изоляции от региональных развитий и недостаточного использования конкурентных преимуществ, отсутствие эффективных механизмов экономического сотрудничества, несовершенство механизмов управления, а также проблема Арцаха императивно требуют разработки экономической стратегии и ее последовательной реализации. Для Республики Армения важнейшим направлением экономической стратегии должно стать прогрессивное развитие отрасли высоких технологий, что предполагает стимулирование инновационной деятельности, внедрение современных механизмов управления, повышение инвестиционной привлекательности, организация экспортоориентированных производств и т.д. Для этого у Армении есть все возможности, которые сформировались еще в годы централизованного управления. Армения в большом народно-хозяйственном комплексе занимала передовые позиции в сферах вычислительной техники, радиоэлектроники, навигационных оборудований, полупроводников и других сферах высоких технологий.

На прошлых этапах развития рыночных отношений в республике начали формироваться новые организационно-правовые формы производства, в ряду которых с точки зрения корпоративного управления, организации современных направлений производства, осуществления инновационной деятельности и активного экономического сотрудничества, безусловно, выделяются акционерные общества. В статье на примере акционерных обществ сферы высоких технологий Республики Армения обсуждены определенные механизмы активизации их инновационной и инвестиционной деятельности.

Ключевые слова: *экономика, инвестиции, инновационная деятельность, стимулирование, финансирование, государственная политика, развитие, эффективность.*
JEL: G02, G32, O31

VARDAN BOSTANDJYAN
Professor at the Chair of Financial Accounting at YSU,
Doctor of Economics

ARMINE ZAKHARYAN
Researcher at the Institute named
after M. Kotanyan, NAS RA, PhD in Economics

Problems of Stimulation of Innovative Activity in the Republic of Armenia.– The paper is devoted to the study of methods and mechanisms for enhancing investment and innovation in the Republic of Armenia, factors determining the effective application of these methods and mechanisms, possible sources of financing innovative and investment projects, as well as the best international practices for stimulating innovation and investment activity.

Vulnerabilities of the current system of economic relations that has formed in Armenia, the difficult geopolitical situation of the republic, the circumstances of isolation from regional developments and the insufficient use of competitive advantages, the lack of effective mechanisms for economic cooperation, the imperfection of management mechanisms, and the Artsakh problem imperatively require the development of an economic strategy and its consistent implementation. For the Republic of Armenia, the most important direction of the economic strategy should be the progressive development of the high-tech industry which involves stimulating innovation, introducing modern management mechanisms, increasing the investment attractiveness, organizing export-oriented industries, etc. For this Armenia has all the opportunities that were formed back in the years of centralized governance. In a large economic complex, Armenia occupied the leading positions in the fields of computer engineering, radio electronics, navigation equipment, semiconductors and other high-tech areas.

During the previous stages of market relations development in the republic, new organizational and legal forms of production began to form, among which, of course, joint-stock companies are distinguished from the point of view of corporate governance, organization of modern areas of production, implementation of innovative activities and the active economic cooperation. The paper, based on the example of joint-stock companies of the high-tech sphere of the Republic of Armenia, discusses certain mechanisms for enhancing their innovation and investment activities.

Key words: *economy, investment, innovation activity, promotion, finance, public policy, development, efficiency.*
JEL: G02, G32, O31